



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 07-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
62-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի
մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի
Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի
փետրվարի 15-ի հերթական նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 04-Ի N 03-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ,ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱԿՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 38-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՊԱՐԳԵՎ ԱՐՄԵՆԱԿԻ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ԳՈՐ ԲԱԲԿԵՆԻ ՏԱԴՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. << ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՄԱՐԳ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԱՐԱՐԱՏ-1 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՎԱՐՈՒԺ ԽԱԶԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ԱԼԲԵՐՏ ԲԵՆԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՅՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. «ՄԱՍԻՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0


ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ 

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ 

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ 

ԳԱՄՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ 

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ 

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ 

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ 

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ 

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ 

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ 


ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ 

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ 

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ 

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ 

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ 

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒԿԻ 

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ 

ՕՍԵՅԱՆ ԶՈՂՐԱԲ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 08-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 04-Ի N 03-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 2-րդ մասով, „Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 04-ի N 03-Ա որոշման հավելվածի 9-րդ գլխի 1-ին կետի «երդմամբ. « » բառից ու կետադրական նշաններից հետո լրացնել.

«Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս ամենացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՄՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻՏ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՕՀԱՆՁԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՎՐԱԲ

[Handwritten signatures in blue ink corresponding to the names listed on the left]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 09-Լ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՒՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻՏ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՕԿԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՒՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մասիս համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորումների համատեքստում: Նախագծով սահմանվում են Մասիս համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները, որում ըստ էության ներառված են նաև սոցիալական աջակցության կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 12-րդ հոդվածների կարգավորումները ցույց են տալիս, որ օրենսդիրը համայնքում սոցիալական պաշտպանությունը դիտարկում է, որպես համայնքի պարտադիր խնդիր, իսկ սոցիալական աջակցության տրամադրումը, որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար օրենսդրական իմպերատիվ պահանջ է սահմանել, որ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների, դրանցից բխող սոցիալական ծառայությունների տրամադրումը պետք է իրականացվի ավագանու կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա:

Սույն որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը նրանում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանու համար նախատեսվել է պարտավորություն, առանձին նորմատիվային բնույթ կրող որոշմամբ սահմանելու համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդրի լուծման չափորոշիչները:

Բացի օրենսդրական պահանջի իրագործման անհրաժեշտությունից, առկա է նաև իրավակիրառական անհրաժեշտություն և նպատակահարմարություն, համայնքային մակարդակում կարգավորելու համայնքի բյուջետային միջոցների հաշվին սոցիալական աջակցություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները, սահմանելով այդ իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը միտված ընթացակարգերը և ենթաօրենսդրական կառուցակարգերը: Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում, առաջարկվում է սահմանել այն չափորոշիչները և ընթացակարգերը, որոնց համաձայն կիրականացվի համայնքում սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը, միաժամանակ, նկարագրվել են սոցիալական ծառայությունները տրամադրող հանձնաժողովի գործառույթները, որոնք թույլ են տալիս վերջինիս, որպես տեղական կամ համայնքային դերակատար, իր մասնակցությունը բերի համայնքային մակարդակում մշակվող և վարվող տեղական սոցիալական քաղաքականության, տեղական սոցիալական ծրագրերի և այլ ծրագրերի իրականացմանը:

Նախագծի ընդունման արդյունքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրումը համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, կարող է իրականացվել ենթաօրենսդրական իրավական կարգավորումների համատեքստում, ինչը



հնարավորություն կընձեռի թե՛ համայնքի ղեկավարի և թե՛ համայնքապետարանի աշխատակազմի պաշտոնատար անձանց համար, գործելու բացառապես իրենց վերապահված լիազորությունների և գործառույթների շրջանակներում, ապահովելով սոցիալական աջակցության տրամադրման գործընթացներում օրինականության պահպանումը:

Նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի, համայնքային մակարդակում խրախուսելու և բարելավելու սոցիալական ծառայությունների ուղղությամբ իրականացվող և իրականացվելիք ծրագրերը, հիմքեր և նախադրյալներ ստեղծելով այս բնագավառում ծրագրային գործողություններ իրականացնելու համար:



ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԿՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴԻՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Մասիս համայնքում (այսուհետ՝ համայնք), սոցիալական աջակցության ոլորտում համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին սոցիալական ծառայություններ մատուցելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, ծառայություն ստանալու համար դիմած անձի (անձանց) կարիքների գնահատման չափորոշիչները, դրանց համապատասխան գնահատման միավորները և ընտանիքի գնահատման թերթիկի ձևը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

- 1) համայնքի ավագանուց՝ 2 /երկու/ անդամ,
- 2) սոցիալական աշխատողներից՝ 2 /երկու/ անդամ,
- 3) համայնքապետարանի աշխատակազմից՝ 2 /երկու/ անդամ,
- 4) համայնքային ենթակայության կազմակերպություններից՝ 1 /մեկ/ անդամ,
- 5) համայնքում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններից՝ 1 /մեկ/ անդամ,
- 6) համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչներից՝ 1 /մեկ/ անդամ
- 7) համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ 1 /մեկ/ անդամ:

4. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

5. Սույն կարգի 4-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում, Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և համայնքի բնակիչ

հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

6. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

7. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Հանձնաժողովի նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

8. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից (1) մեկ տարի ժամկետով:

9. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքում սոցիալական ոլորտը սպասարկող աշխատողը (իսկ նրա բացակայության դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկված համայնքապետարանի աշխատակիցներից մեկը):

10. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան և նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի մասին: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

11. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

12. Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներ և կազմված եզրակացությունները ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ)

13. Հանձնաժողովի գործունեությունը ուղղված է ընտանիքների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանը, աջակցմանը, ռիսկերի կառավարմանը՝ դրանց կարգավորմանն ու նվազեցմանը: Հանձնաժողովը, համախմբելով տեղական ինքնակառավարման մարմիններին, պետական և տարածքային կառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ մատուցողներին, սոցիալական ծառայություններից օգտվողներին, քաղաքացիական հասարակության դերակատարներին, աջակցում է համայնքի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների բարելավմանը, աղքատության կրճատմանը, սոցիալական ներառմանն ուղղված մասնակցային գործընթացներին:

14. Հանձնաժողովը կարող է իրականացնել միջոցառումներ և գործառույթներ, որոնք ուղղված են՝

- 1) համայնքի կարիքների հիման վրա՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացին.
- 2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի

- հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունների մշակմանը, առաջարկությունների ներկայացմանը, համայնքում սոցիալական աջակցության տրամադրման բարենպաստ միջավայրի ստեղծմանը.
- 3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն ուղղված ծառայությունների մշակմանը, կարգավորմանը.
 - 4) մասնակցել թիրախ բնակավայրերում կարիքների գնահատման մեթոդաբանության քննարկմանը, մշակմանը, օժանդակել կարիքների գնահատման համար տեղեկատվության փոխանակմանը (խնդիրների) ռիսկերի բացահայտմանը, ուղղորդմանը.
 - 5) մասնակցել համայնքային հանդիպումներին, քննարկումներին, տեղեկատվական միջոցառումներին.
 - 6) նպաստել սոցիալական նշանակության ծրագրերի հասանելիության, հասցեականության և տեսանելիության բարձրացմանը.
 - 7) աջակցել տեղական սոցիալական ծրագրերի կանոնավոր և պարբերական մոնիտորինգներին.
 - 8) նպաստել համայնքում մատուցվող սոցիալական աջակցության ծառայությունների կայունությանը, այդ թվում՝ ցուցաբերել աջակցություն հավաստագարման գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը.
 - 9) օժանդակել մշակված տեղական սոցիալական ծառայությունների ֆինանսավորման աղբյուրների բացահայտման աշխատանքներին.
 - 10) մասնակցել և (կամ) ցուցաբերել խորհրդատվական աջակցություն համայնքահեն սոցիալական ծառայությունների մասնակցային պլանավորմանն ու մատուցմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի առաջարկների գնահատման և ընտրության գործընթացներին:

III. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

15. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.
 - 1) համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են և բնակվում են համայնքում,
 - 2) Արցախի Հանրապետությունից տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են համայնքում:
16. Դիմումը ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմ, հետևյալ եղանակով.
 - 1) անձամբ՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)
 - 2) փոստով՝ դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)

3) էլեկտրոնային՝ դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով կամ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը:

17. Դիմումին կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).

3) բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի որոշման պատճենը,

4) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում) .

5) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից (անհրաժեշտության դեպքում).

6) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնաս, առանց ծնողական խնամքի մնալու և այլ).

7) փոստային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի պատճենները.

8) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումը պետք է լինի ստորագրված և դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

18. Դիմումները համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 2 (երկու) շաբաթյա ժամկետում, հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

19. Հանձնաժողովի նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին տրվում է համապատասխան ընթացք անհրաժեշտության դեպքում կատարում է տունայց, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում:

20. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել նաև դիմումատուն:

21. Հանձնաժողովի տված դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում: Հանձնաժողովի տված բացասական եզրակացության դեպքում դիմումատուն գրավոր տեղեկացվում է:

22. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

23. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

IV. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

24. Դիմումի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ, անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի որոշմամբ այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը:

25. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

26. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տունայց կատարելուց հետո աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:

27. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

28. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

29. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:

30. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

31. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն, զոհված զինծառայողների ընտանիքներին աջակցություն, մեկ ծնունդով երեք և ավելի երեխա ծնվելու դեպքում աջակցություն, դժբախտ պատահարի և բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնասի դեպքերում աջակցություն) անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի և հանձնաժողովի երկու անդամի հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

V. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

32. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

- 1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
- 2) միայնակ մայր - 1 միավոր,
- 3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
- 4) բազմազավակ՝
 - ա. չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք - 1 միավոր,
 - բ. վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիք - 2 միավոր,
- 5) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք - 2 միավոր,

- 6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք - 2 միավոր
- 7) հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիք -2 միավոր
- 8) տնակ կացարանում կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 2 միավոր
- 9) վարձով բնակվող ընտանիք - 1 միավոր
- 10) դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնաժին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր
- 11) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր,
- 12) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) ունեցող ընտանիք -3 միավոր
- 13) հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձ ունեցող ընտանիք - 2 միավոր
- 14) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր
- 15) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք -2 միավոր.
- 16) կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք -3
- 17) մինչև 23 տարեկան ուսանող ունեցող ընտանիք -2 միավոր
- 18) առանց ծնողական խնամքի մնացած երեխա ունեցող ընտանիք -3 միավոր
- 19)խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք -3 միավոր
- 20) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն) ընտանիք -4
- 21) անբարենպաստ այլ պայմաններ 1-ից 4 միավոր (հիմնավորում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով)
- 22) Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 4 միավոր ստանալու դեպքում:

32. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեում հաշվառված, մշտապես բնակվող համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:

VI. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

33. Աջակցություն տրամադրելու փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմումը կամ գրությունը.
- 2) դիմողի և (կամ) նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.
- 3) ընտանիքի և (կամ) նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.
- 4) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև1) – լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.
- 5) հանձնաժողովի եզրակացությունը.

Ընտանիքի իրավիճակը

Իրավիճակ	Նկարագիր
Բնակարանային պայմաններ	
Կոմունալ-կենցաղային և սանիտարա-հիգիենիկ պայմաններ	
Աշխատանքով ապահովվածություն	
Եկամուտներ	
Հազուստով ապահովվածություն	
Սննդով ապահովվածություն	
Առողջապահական կարիքներ	
Այլ	

Ընտանիքի սոցիալական կապերը

Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք	
տվյալներ	կարգավիճակ

Լրացուցիչ տեղեկատվություն

Մասնագետի դիտարկումներ

Լուսանկարների առկայություն (անհրաժեշտության դեպքում)



Աշխատանքային խմբի անդամների տորագրությունները

Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

N	Չափորոշիչը	Չափորոշիչի համար սահմանված միավորը	Ընտանիքի ստացած միավորը
1	Նպաստառու ընտանիք	1	
2	Միայնակ մայր	1	
3	Ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա	1	
4	Բազմազավակ չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող) ընտանիք	1 2	
5	Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)	2	
6	1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք	2	
7	Հաշմանդամ երեխաի ընտանիք	2	
8	Տնակ կացարանու կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք	2	
9	Վարձով բնակվող ընտանիք	1	
10	Դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետից տուժած) ընտանիք	3	
11	Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք	2	

12	Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) անձի ընտանիք	3	
13	Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք	2	
14	Միայնակ չաշխատող թոշակառու	2	
15	Միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք	2	
16	Կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք	3	
17	Մինչև 23 տարեկան ուսնող ունեցող ընտանիք՝	2	
18	Երկողմանի ծնողազուրկի (ԱԾԻՄ) երեխա ունեցող ընտանիք	3	
19	Խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք	3	
20	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն և այլն) անձի ընտանիք	4	
21	Այլ անբարենպաստ պայմաններ	1-4	
	Ընդամենը		

Աշխատանքային խմբի անդամների ստորագրությունները

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԳԱՐ



ԴԱԿԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 10-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով **Հայաստանի
Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս
համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական
լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն կից հավելվածի:

2. Համայնքի կամավոր խնդիրները կարող են իրականացվել, միայն պարտադիր
խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ
ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎԱՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՕՃԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՒՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիս համայնքի ավագանու
15 փետրվարի » 2024 թ.
10-Լ որոշման

**Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի կամավոր
խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և իրականացման
կարգը**

Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի /այսուհետև՝ համայնքի/ կամավոր խնդիրների և դրանց լուծման նպատակով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների և դրանց իրականացման հետ կապված հարաբերությունները: ամայնքի կամավոր խնդիրներն այն խնդիրներն են, որոնցով համայնքային կյանքի բնականոն ընթացքը ուղղակիորեն պայմանավորված չէ և կարող են իրականացվել, միայն պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: ամայնքի կամավոր խնդիրներն են՝

- ա/ համայնքի բնակիչներին սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքներին համապատասխան օգնության տրամադրման կազմակերպումը.
- բ/ համայնքի հանրակրթական դպրոցների գործունեության աջակցումը.
- գ/ աջակցումը և խթանումը համայնքում սպորտի զարգացմանը.
- դ/ աջակցումը համայնքի հոգևոր և մշակութային կառույցներին և կազմակերպություններին՝ նպաստելով ժողովրդի հավատին և նրա նյութական ու հոգևոր վերելքին.
- ե/ տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կամ հանրային շահերից ելնելով անդամակցումը Հայաստանի համայնքների միություն ՀԿ-ին և կամ աջակցումը համայնքում գործող այլ ՀԿ-ներին:

սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծվում են համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներով:

ամայնքի ղեկավարի կողմից ստեղծված սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, խոցելի ընտանիքներին սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության ծառայությունների բարելավման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի կողմից (սահմանված չափորոշիչներին համապատասխան) տրված դրական եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն

տրամադրելու մասին որոշում.

ա/ Համայնքի ղեկավարի

կողմից սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող միանվագ սոցիալական աջակցության առավելագույն չափը սահմանվում է 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ: Նույն ընտանիքին 1 (մեկ) օրացուցային տարվա ընթացքում հատկացվող գումարը չի կարող գերազանցել 200000 /երկու հարյուր հազար/ դրամը:

բ/ սոցիալապես անապահով ընտանիքի անդամի մահվան դեպքում հուղարկավորության կազմակերպման համար մահվանից մինչև 2 (երկու) ամսվա ընթացքում դիմելու դեպքում հատկացնել աջակցություն առավելագույնը՝ 100 000 / մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

գ/ Միայն պետական հավատարմագրում ունեցող բարձրագույն, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվում է ուսման վարձի հատկացում՝ մինչև 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ 1(մեկ) օրացուցային տարվա ընթացքում 1 (մեկ) անգամ: Բացառություն ԱԳՀ-ում հաշվառված ընտանիքների ուսանողների, որոնց ուսման վարձը ամբողջությամբ զեղչվում է պետության կողմից

քատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության դեպքերում (անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն, զոհված զինծառայողների ընտանիքներին աջակցություն, մեկ ծնունդով երեք և ավելի երեխա ծնվելու դեպքում աջակցություն, դժբախտ պատահարի և բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնասի դեպքերում աջակցություն) տրամադրվում է սոցիալական աջակցություն մինչև

սոցիալական աջակցությունը նույն ընտանիքին կարող է տրամադրվել դիմելու օրվան նախորդող 1(մեկ)օրացուցային տարվա ընթացքում առավելագույնը 3(երեք)անգամ:

Համայնքի կամավոր խնդիրների և դրանց համար սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները

չեն կարող գերազանցել համայնքի ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 8,5 %-ը:

ամավոր խնդիրների լուծման համար ֆինանսական միջոցների հատկացումը իրականացնում է համայնքի ղեկավարը՝ համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և միայն դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների և կամ համաձայնության առկայության դեպքերում:

յն դեպքում, երբ կամավոր խնդրի լուծումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, ապա վերջիններիս կողմից լիազորված ներկայացուցիչը /այսուհետ՝ նախաձեռնող/ համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդրի լուծման իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով դրա նպատակը և անհրաժեշտության հիմնավորումը, խնդրի կարգավորման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

ամայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 10-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝

ա/ կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնվելու դեպքում 20-օրյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդրի իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդրի իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը, ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

բ/ կամավոր խնդրի լուծման իրականացմանը չհամաձայնելու դեպքում 10-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է նախաձեռնողին, նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

ամայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության

հիմնավորումը, իսկ կամավոր խնդրի լուծման իրականացումը մերժելու դեպքում
մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 11-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 38-Լ
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի
Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի կամավոր խնդիրները, դրանց
լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը
սահմանելու մասին» N 38-Լ որոշումը:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ 

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ 

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ 

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ 

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ 

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ 

ԹՈՎԱՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ *ԵՍ*
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ *ԿՆ*
 ՀԱԿՈՒՅԱՆ ՆՈՐԱՅՐ *Ե. Կարապետյան*
 ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱԿԻԹ *Դ. Կարապետյան*
 ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ *Հ. Կարապետյան*
 ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *Մ. Կարապետյան*
 ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆԻՔ *Ա. Կարապետյան*
 ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ *Ե. Կարապետյան*
 ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ *Է. Կարապետյան*
 ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ *Վ. Կարապետյան*
 ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ *Է. Կարապետյան*
 ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ *Զ. Կարապետյան*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱԿԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով 2023 թվականի Մասիս համայնքի բյուջեի կատարման տարեկան արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը /հաշվետվությունը կցվում է/ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

ա/ եկամուտների կատարման գծով՝ համաձայն հավելված 1-ի, ըստ որի՝ եկամուտների առաջադրանքը 4 932 723 435 դրամի դիմաց կատարվել է 5 016 701 031 դրամ, որից

- բյուջեի վարչական մասի եկամուտները՝ 4 043 638 700 դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 4 218 716 046 դրամ կամ 104.3 %-ով:

- բյուջեի ֆոնդային մասի եկամուտները՝ նախատեսված 1 589 084 735 դրամի դիմաց կատարվել է 1 347 984 985 դրամ կամ 84.8 %-ով:

- բյուջեի ֆոնդային մասի ընդհանուր մուտքերը նախատեսված 4 103 468 807 դրամի դիմաց փաստացի կազմել է 3 175 292 700 դրամ, որից՝

տարեսկզբի մնացորդը՝ 1 164 384 000 դրամ, համայնքի սեփականություն համարվող գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 672 023 700 դրամ, կապիտալ սուբվենցիա՝ 785 690 500 դրամ, բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային մաս՝ 550 000 000 դրամ, համայնքի գույքին պատճառված վնասի փոխհատուցումից մուտք՝ 3 194 500 դրամ:

բ/ Ծախսերի կատարման գծով՝ համաձայն հավելված 2-ի, ըստ որի՝

ծախսերի առաջադրանքը 6 097 107 507.40 դրամի դիմաց կատարվել է 5 250 111 082.40 դրամ, որից

• բյուջեի վարչական մասի ծախսերը՝ 4 043 638 700 դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 3 617 757 982.20 դրամ կամ 89,5 %-ով

• բյուջեի ֆոնդային մասի ծախսերը՝ 2 753 468 807.40 դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 2 182 353 100.20 դրամ կամ 79.3 %-ով:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ 

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ 

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ 

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ 

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ 

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ 

ԹՈՎԱՍԱՅԱՆ ԿԱՐԻՆԵ 

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ 

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ 

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ 

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ 

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ 

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ 

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ 

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ *[Signature]*
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒԿԻ *[Signature]*
ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ *[Signature]*
ՕՍԵՅԱՆ ԶՈՒՐԱԲ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2023թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 4 043 638, 7 հազար դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4 218 716, 0 հազար դրամ, կամ տարեկան մուտքերի առաջադրանքը կատարվել է 104, 3 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 738 787, 1 հազար դրամի դիմաց կատարվել է 1 918 831, 0 հազար դրամ կամ 110, 4 %-ով :

1. Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 263 273, 7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1 198 120, 1 հազար դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 94, 8 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 92, 1 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 106, 9 %-ով, տեղական տուրքերը՝ 131, 6 %-ով, պետական տուրքերը՝ 142, 5 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 78 929, 4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 103 891, 2 հազար դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 18 000, 0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 25 652, 6 հազար դրամ:

2. Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 2 295 887, 0 հազար դրամ:

3. Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 479 511, 4 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 724 708, 9 հազար դրամ, կամ կատարվել է 151, 1 %-ով, նույն թվում՝ հողերի վարձակալությունից եկամուտները՝ 106, 0 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 208, 2 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 3 998,0 հազ. դրամ:

1.26 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 29 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0024 կադաստրային ծածկագրով, 0.0995 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.27 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 30 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0131-0015 կադաստրային ծածկագրով, 0.0995 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.28 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 31 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0028 կադաստրային ծածկագրով, 0.0995 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.29 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 32 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0131-0016 կադաստրային ծածկագրով, 0.0995 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.30 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 33 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0026 կադաստրային ծածկագրով, 0.0995 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.31 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 34 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0131-0017 կադաստրային ծածկագրով, 0.0995 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.32 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 35 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-017-0132-0027 կադաստրային ծածկագրով, 0.0995 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.33 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 36 հողամաս
հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման
գործառնական նշանակության 03-017-0131-0018 կադաստրային ծածկագրով,
0.0995 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի
կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.34 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 37 հողամաս
հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման
գործառնական նշանակության 03-017-0132-0023 կադաստրային ծածկագրով,
0.09868 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի
կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.35 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Արբաթ, 20-րդ փողոց, 38 հողամաս
հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման
գործառնական նշանակության 03-017-0131-0019 կադաստրային ծածկագրով,
0.08288 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի
կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 2888 ՀՀ դրամ,

1.36 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Նոր թաղամաս,
4-րդ փողոց, 13 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային խառը
կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0137-0659 կադաստրային
ծածկագրով, 0.0521 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել
հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 4442 ՀՀ դրամ:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՄՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎԱՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ *[Signature]*
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ *[Signature]*
 ՀԱԿՈՒՅԱՆ ՆՈՐԱՅՐ *[Signature]*
 ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ *[Signature]*
 ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ *[Signature]*
 ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *[Signature]*
 ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ *[Signature]*
 ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ *[Signature]*
 ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ *[Signature]*
 ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ *[Signature]*
 ՕԿԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ *[Signature]*
 ՕՍԵՅԱՆ ԶՈՒՐԱԲ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 17-Ա

ՎԱՐՈՒԺ ԽԱԶԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վարուժ Խաչիկի Հովսեփյանի դիմումը /մտից՝ 20.11.2023թ. թիվ 15397, / Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնքի ք. Մասիս, Դպրոցականների փողոց 1/3 ավտոտնակ հասցեում 0,00173 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-0136-0006, սեփականության իրավունքի վկայական N 1542484/, որը ծանրաբեռնված է Վարուժ Խաչիկի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակով /ծածկագիր՝ 03-003-0136-0006-001/ և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Վարուժ Խաչիկի Հովսեփյանին:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 76847 ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 4442 ՀՀ դրամ:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

[Handwritten signature]

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎԱՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

[Handwritten signature]

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ՆՈՐԱՅՐ

[Handwritten signature]

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

[Handwritten signature]

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

[Handwritten signature]

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

[Handwritten signature]

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

[Handwritten signature]

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

[Handwritten signature]

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

[Handwritten signature]

ՕՍԵՅԱՆ ԶՈՒՐԱԲ

[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 18-Ա

ԱԼԲԵՐՏ ԲԵՆԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Ալբերտ Մարգարյանի դիմումը /մտից՝ 30.11.2023թ. թիվ 16154, / Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնքի ք. Մասիս, 3-րդ թաղամաս 13/15 ավտոտնակ հասցեում 0,00247 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-073-023, սեփականության իրավունքի վկայական N 1456732/, որը ծանրաբեռնված է Ալբերտ Բենիկի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակով /ծածկագիր՝ 03-003-073-023-001/ և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Ալբերտ Բենիկի Մարգարյանին:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 109718 ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 4442 ՀՀ դրամ:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՄՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒԿԻ

ՕԿԱՆՁԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՒՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՆԻ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՍԻՍ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 19-Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի պահանջներով, հաշվի առնելով, որ նշված տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել Մասիս համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք, ք. Մասիս 5-րդ թաղամաս 1-ին փողոց 15/3 հասցեում գտնվող բնակավայրերի ընդհանուր օգտագործման 0.015 հա հողատարածքը / ծածկագիր՝03-003-0157-0004 / 25 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրելու համար կազմակերպել մրցույթ:

2.Մեկնարկային գին սահմանել 120000 /հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -4

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱԵ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԹՈՎԱՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՒԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒԿԻ

ՕԿԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՒՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 20-Ա

«ՄԱՍԻՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Հիմնադրել «Մասիս տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման» հիմնադրամ:

2. Սահմանել, որ «Մասիս Տեղեկատվական Տեխնոլոգիաների զարգացման» հիմնադրամի հիմնադիրը Մասիս համայնք է, որի անունից հանդես եկող լիազորված անձը Մասիս համայնքի ղեկավարն է:

3. Հաստատել «Մասիս Տեղեկատվական Տեխնոլոգիաների զարգացման» հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

4. «Մասիս Տեղեկատվական Տեխնոլոգիաների զարգացման» հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ալիկ Օհանյանին (նույն.քարտ՝ 005762109, տրված 20.03.2017թ. 001-ի կողմից, հասցե՝ ՀՀ, ք.Մասիս, Յթաղ. 42. 32բն., էլ.հասցե՝ alik.oganyan@gmail.com, հեռ. +37494677773)

5. «Մասիս տեղեկատվական Տեխնոլոգիաների զարգացման» հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել հիմնադրամի պետական գրանցումը:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎԱՍԱՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ

ՇԱՔՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՂՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի
մարզի Մասիս համայնքի ավագանու
«15» փետրվարի 2024 թվականի N 20-Վ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Յ ՈՒ Ն

«ՄԱՍԻՍ ՏԵԴԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Մասիս Տեղեկատվական Տեխնոլոգիաների զարգացման» հիմնադրամը (այսուհետ՝ հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, Մասիս համայնքի ավագանու որոշումների, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

2. Հիմնադրամի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Մասիս տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման» հիմնադրամ.

2) հայերեն կրճատ՝ «Մասիս տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման» հիմնադրամ.

3) ռուսերեն լրիվ՝ ФОНД «Масис Развитие информационных технологий».

4) ռուսերեն կրճատ՝ ФОНД «Масис Развитие информационных технологий».

5) անգլերեն լրիվ՝ FUND «Masis Development of Information Technologies».

6) անգլերեն կրճատ՝ «Masis Development of Information Technologies» FUND:

3. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Մասիս համայնք, Գյուղ Դուկասավան -----:

4. Հիմնադրամի հիմնադիրը Մասիս համայնքն է (այսուհետ՝ հիմնադիր), որի անունից հանդես եկող լիազորված անձը Մասիս համայնքի ղեկավարն է:

5. Հիմնադրամի շահառուները տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և նորարարության բնագավառներին առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձինք են:

6. Հիմնադրամը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, հիմնարկներ, որոնք գործում են հիմնադրամի անունից՝ հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան:

7. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում հիմնադրամի պարտավորությունների համար:

8. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ստեղծված է համարվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հիմնադրամը կարող է ունենալ իր անվանումը պարունակող դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև այլ անհատականացնող միջոցներ: Հիմնադրամն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով կամ արտարժույթով:

9. Հիմնադրամն ինքնուրույն է որոշում իր գործունեության ռազմավարական ծրագրերը:

10. Հիմնադրամը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

11. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքում և կարգով:

12. Հիմնադրամն ունի Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված բոլոր եղանակներով իր քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրավունք:

13. Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Տարբեր աղբյուրներից, ինչպես նաև իր տնտեսական գործունեությունից ստացված միջոցներն օգտագործում է միայն սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

14. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վարում և ներկայացնում է հաշվապահական ու վիճակագրական հաշվետվություն:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

15. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կարող է կատարել հիմնադրամի հիմնադիրը:

3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16. Հիմնադրամի գործունեության առարկան Մափս համայնքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ապահովումն է:

17. Հիմնադրամի գործունեության նպատակներն են՝

- 1) տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում համայնքներում
- 2) ռոբոտաշինության, դրոնաշինության զարգացում,
- 3) հետազոտությունը և ուսումը խթանող, գրավիչ, ապահով և անվտանգ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական և ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած համագործակցային միջավայրի ստեղծումը՝ հաշվի առնելով ոլորտների արդի և զարգացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները.
- 4) համայնքներում կրթության զարգացում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
- 5) Երիտասարդների շրջանում սեմինարների կազմակերպում:
- 6) Համայնքային երիտասարդների իրազեկության բարձրացում: Թվային տեխնոլոգիաների իրազեկում:
- 7) Համայնքներում փոփոխություններ մտցնելու նպատակով երիտասարդների մոտիվացիայի բարձրացում,
- 8) Երիտասարդների շրջանում փափուկ և կոշտ հմտությունների տրամադրում, զարգացում:
- 9) պետական մարմինների աշխատանքի բարեկարգման նպատակով գործընթացների թվայնացում:
- 10) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացում:
- 11) կանաչապատման թվայնացում, այլընտրանքային էերգիայի աղբյուրների զարգացում:
- 12) Այլ գործունեություն՝ հիմնադրի որոշմամբ / համաձայնությամբ /, որոնք ուղղված են համայնքի զարգացմանը:

4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

18. Հիմնադրամը որպես սեփականություն կարող է ունենալ շարժական և անշարժ գույք, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր ու Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ գույք:

19. Հիմնադրի կողմից հիմնադրամին սեփականության իրավունքով հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է:

20. Հիմնադրամը տիրապետում, օգտագործում ու տնօրինում է իրեն պատկանող և իր կողմից ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

21. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներ կարող են լինել՝

- 1) հիմնադրի կամավոր ներդրումները.
- 2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամական մուտքերը.

3) ֆիզիկական ու իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվություններն ու նվիրաբերությունները.

4) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

5) դրամաշնորհները.

6) Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

22. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների՝ բացառությամբ աշխատողների աշխատավարձի ու դրան հավասարեցված միջոցների, և, հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված, փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ հիմնադրամի մարմինների անդամները, ինչպես նաև հիմնադրամի աշխատողները սույն կանոնադրությամբ նախատեսված շահառուներ են:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՄԸ ԵՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Հիմնադրամը, իր կանոնադրական նպատակներին համապատասխան, իրավունք ունի՝

1) անարգել տարածելու տեղեկություններ իր գործունեության մասին.

2) հիմնադրելու մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.

5) ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու նրանց մասնակիցը.

6) իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ գործունեություն:

24. Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

25. Հիմնադրամը կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) դասընթացների, սեմինարների, շնորհանդեսների, ցուցահանդեսների կազմակերպում.

2) կրթական ծրագրերի իրականացում.

3) կառավարման հարցերով ծառայությունների մատուցում.

4) հանրային սննդի, հանգստի, կենցաղի կազմակերպում ու սպասարկում:

26. Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով հիմնադրամը՝

1) ներգրավում է միջոցներ՝ իր կանոնադրական նպատակների իրականացման համար.

2) համագործակցում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների, միջազգային տնտեսական ու ֆինանսական կառույցների, գործակալությունների և հիմնադրամների հետ:

27. Հիմնադրամը պարտավոր է՝

1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

2) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել՝

ա. հաշվետվություն իր գործունեության մասին, որը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, հիմնադրի, հոգաբարձուների խորհրդի անդամների, տնօրենի անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են հիմնադրամի միջոցներից և

ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում, ինչպես նաև հիմնադրամի աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը,

բ. հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը.

3) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

4) Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.

5) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

28. Հիմնադրամի մարմիններն են՝

1) հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ).

2) հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ղեկավարող կառավարիչը՝ հիմնադրամի տնօրենը:

29. Խորհուրդը բաղկացած է 5 անդամից: Ի պաշտոնե խորհրդի անդամ և նախագահ է Մասիս համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը: Խորհրդի մյուս անդամներ կարող են լինել Մասիս համայնքի բնակիչներ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հաջողություններ գրանցած անձիք և կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խորհրդի անդամ առաջադրում է հիմնադիրը:

30. Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում:

31. Խորհրդի առաջին կազմի անդամների լիազորությունների սկիզբը կարգավորվում է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության պահանջի համաձայն:

32. Խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.

2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն երեք քառորդով.

3) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.

4) եթե դադարել են խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.

6) նրա մահվան դեպքում.

7) նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում:

33. Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով՝ ոչ ուշ, քան խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում: Հիմնադրամի տնօրենը խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է հիմնադրին, խորհրդի անդամներին ներկայացրած և հշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններին:

34. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) հիմնադրամի ռազմավարական և տարեկան ծրագրերի հաստատումը.

2) հիմնադրամի բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու հիմնադրամի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների հաստատումը.

3) հայտարարվող և անցկացվող մրցույթների մասին կանոնակարգի մշակումն ու հաստատումը.

4) հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

5) հիմնադրամի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

6) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) հիմնադրամի տնօրենի և սույն կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության ու նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

8) սույն կանոնադրությամբ նախատեսված հիմնադրամի այլ մարմինների ձևավորումը.

9) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.

10) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

11) տարեկան մեկ անգամ տնօրենի հաշվետվությունները լսելը.

12) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

13) հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

14) հիմնադրամի կառուցվածքի հաստատումը.

15) հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը.

16) հիմնադրամի գործարքների կնքման կարգի հաստատումը.

17) Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

35. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները, կարող է կազմավորել խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր.

2) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

3) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրության վարումը.

4) տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում խորհրդի քննարկմանն է ներկայացնում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

36. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) առաջարկություններ ներկայացնելու խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ:

37. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել խորհրդի նիստերին.

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով հիմնադրամի շահերից:

38. Հիմնադրամի տնօրենի իրավասությանն են պատկանում հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերաբերող հարցերի: Հիմնադրամի տնօրենի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև լիազորությունների դադարեցման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ և տնօրենի հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից տնօրենի աշխատանքային պայմանագիրն ստորագրում է խորհրդի նախագահը կամ խորհրդի լիազորված այլ անձ:

39. Հիմնադրամի տնօրենը՝

1) կազմակերպում է խորհրդի որոշումների կատարումը.

2) տնօրինում է հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում հիմնադրամի անունից.

3) ներկայացնում է հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

4) գործում է առանց լիազորագրի.

5) տալիս է լիազորագրեր.

6) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

7) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.

8) խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

9) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատողներին.

11) հիմնադրամի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

12) հաշվետու է խորհրդին.

13) հիմնադրամի գործարքների կնքման կարգի համաձայն ընդունում է որոշում հիմնադրամի անվամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու կամ վերջինիս գույքն օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված գործարքներ կատարելու մասին.

14) խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշման հիմքով կարող է կատարել հիմնադրամի տարեկան բյուջեով ամրագրված միջոցների վերաբաշխում՝ մինչև 10 տոկոսի չափով:

40. Հիմնադրամի տնօրենն այլ կազմակերպություններում կարող է զբաղեցնել վճարովի պաշտոններ՝ միայն խորհրդի համաձայնությամբ:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԵՐ ԿԱՐԳԸ

41. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է տարեկան երկու անգամ գումարվող հերթական նիստերի միջոցով: Խորհրդի արտահերթ նիստ գումարում է խորհրդի նախագահը՝ իր կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ, նախաձեռնողի սահմանած օրակարգով: Խորհրդի քարտուղարը երեք աշխատանքային օրվա ընթացքում խորհրդի արտահերթ նիստի օրակարգի և ժամկետի մասին գրավոր տեղեկացնում է խորհրդի անդամներին:

42. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Զվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

43. Եթե խորհրդի նիստում քննարկվում է հիմնադրամի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը թվեարկությանը չի մասնակցում:

44. Խորհրդի անդամները կարող են խորհրդի նիստերին մասնակցել նաև ուղիղ հեռակապի միջոցով:

45. Խորհրդի որոշմամբ՝ խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով:

46. Խորհրդի նիստերին պարտադիր մասնակցում է հիմնադրամի լոնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

47. Հիմնադրամի տնօրենը որոշումներն ընդունում է ինքնուրույն՝ ելնելով խորհրդի որոշումներից և հիմնադրամի շահերից:

48. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված անձինք:

49. Հիմնադրամի մարմինների նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են հիմնադրամի մարմնի նախագահը և տվյալ նիստի քարտուղարը: Հիմնադրամի մարմնի նախագահը պատասխանատվություն է կրում նիստի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՑԱՐՈՒՄԸ

50. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հիմնադրի որոշմամբ:

51. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա:

52. Հիմնադրամը կարող է լուծարվել, եթե՝

1) հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

2) հիմնադրամն իր գործունեությամբ շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.

3) հնարավոր չէ հասնել հիմնադրամի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ.

4) հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.

5) հիմնադրամը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

6) հիմնադրամը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ.

7) Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ դեպքերում:

53. Հիմնադրամը լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

54. Հիմնադրամի լուծարման դեպքում՝ պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

55. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գործունեությունը դադարած՝ պետական գրանցման պահից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով, 82.1-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի /հավելվածը կցվում է/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ 

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ 

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ 

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ 

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎԱՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՆԱԿԱՊԵՏՅԱՆ ԱՆԻՏ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒԿԻ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՂՐԱԲ

(Handwritten signatures in blue ink corresponding to the names above)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի N 22-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշել 2024 թվականի մատի 14-ը:

Կողմ -18

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ԷԼՄԻՐԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԴՈՒՇԻ

ՕՃԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻՋԱԿԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՒՐԱԲ

Handwritten signatures in blue ink corresponding to the names listed on the left.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ